# ԻՆՉՊԵ՞Ս ԿԻՍՎԵԼ ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ, ՈՐ ԱԿԵԼԻ ԲՆԱԿԱՆ ԼԻՆԻ

*Սպասավորությունը վկայելն է: Սպասավորության ճկունությունը կարող է մեծացնել վկայությամբ կիսվելու մեր հնարավորությունները՝ պաշտոնական և ոչ պաշտոնական միջոցներով:*

Մենք ուխտել ենք «կանգնել որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում» (Մոսիա 18.9): Մեր վկայությամբ կիսվելը վկաներ լինելու մի մասն է և Սուրբ Հոգուն հրավիրելու հզոր միջոց է, որպեսզի դիպչենք մարդկանց սրտերին և փոխենք նրանց կյանքը:

«Վկայությունը, իրական վկայությունը, որը ծնվել է Հոգուց և հաստատվել Սուրբ Հոգու կողմից, կյանքեր է փոխում»,- ասել է Նախագահ Մ. Ռասսել Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը:[1]

Սակայն մեր վկայությամբ կիսվելը մեզանից ոմանց համար կարող է վախեցնող և անհարմար լինել: Դա կարող է լինել այն պատճառով, որ մենք մտածում ենք, որ վկայությամբ կիսվելը մի բան է, որը մենք անում ենք ծոմի և վկայության ժողովներին կամ դաս սովորեցնելիս: Այդ պաշտոնական միջավայրում մենք հաճախ օգտագործում ենք որոշակի բառեր և արտահայտություններ, որոնք ծագում են բնական խոսքից:

Մեր վկայություններով կիսվելը կարող է ավելի կանոնավոր օրինություն դառնալ մեր և ուրիշների կյանքում, երբ հասկանանք, թե որքան հեշտ է մեր առօրյա կյանքում կիսվել այն ամենով, ինչին մենք հավատում ենք: Ահա մի քանի մտքեր, որոնք կարող են օգնել ձեզ սկսել:

### Մի բարդացրեք

Վկայությունը պարտադիր չէ սկսել «կցանկանայի բերել իմ վկայությունը» և վերջացնել «Հիսուս Քրիստոսի անունով, ամեն» արտահայտություններով: Վկայությունն արտահայտում է այն, ինչին մենք հավատում ենք և գիտենք, որ ճշմարիտ է: Ուստի, փողոցում զրույցը ձեր հարևանի հետ նրախնդրի մասին և ձեր խոսքերը՝ «ես գիտեմ, որ Աստված պատասխանում է աղոթքներին», կարող են նույնքան զորավոր լինել, որքան եկեղեցու ամբիոնից ասված ցանկացած վկայություն: Զորությունը պարտադիր չէ, որ հորդի ճարտար լեզվից. այն գալիս է Սուրբ Հոգուց, ով հաստատում է ճշմարտությունը (տես Վարդապետություն և Ուխտեր 100.7–8):

### Ընդգրկվեք առօրյա զրույցի մեջ

Եթե մենք ցանկանում ենք կիսվել, մեր շրջապատում կան հնարավորություններ, երբ կարող ենք վկայություն բերել առօրյա մեր խոսքում: Օրինակ.

- Ինչ-որ մեկը հարցնում է ձեզ ձեր հանգստյան օրերի մասին: «Հրաշալի էր»,- դուք պատասխանում եք: «Եկեղեցին այն էր, ինչ կարիքը ես ունեի»:
- Լսելով ձեր կյանքի մարտահրավերի մասին ինչ-որ մեկը կարեկցում է ձեզ. «Ես շատ եմ ցավում»: Դուք պատասխանում եք. «Շնորհակալություն ձեր մտահոգության համար: Ես գիտեմ, որ Աստված կօգնի ինձ: Նա միշտ օգնել է ինձ»:
- Ինչ-որ մեկը նկատում է. «Հուսով եմ, որ այս սարսափելի եղանակը շուտով կփոխվի», կամ «ավտոբուսը հաստատ ուշանում է» կամ «անտանելի երթևեկություն է»: Դուք կարող եք պատասխանել. «Համոզված եմ, որ Աստված կօգնի ամեն ինչ հարթել»:

### Կիսվեք ձեր փորձառություններով

Հաճախ մենք միմյանց հետ զրուցում ենք մեր մարտահրավերների մասին: Երբ ինչ-որ մեկը պատմում է իր դժվարությունների մասին, դուք կարող եք կիսվել ձեր փորձով, թե ինչպես է Աստված օգնել ձեր փորձությունների ժամանակ և վկայել, որ դուք գիտեք, որ Նա կարող է նաև օգնել նրանց: Տերն ասել է, որ Նա զորացնում է մեզ մեր փորձությունների մեջ, «որպեսզի հետագայում դուք կարողանաք կանգնել որպես վկաներ ինձ համար, և որպեսզի դուք կարողանաք հաստատ իմանալ, որ ես՝ Տեր Աստվածս, այցելում եմ իմ ժողովրդին իրենց չարչարանքների մեջ» (Մոսիա 24.14): Մենք կարող ենք կանգնել որպես Նրա վկաներ, երբ վկայենք, թե ինչպես է Նա օգնել մեզ մեր փորձությունների ժամանակ:

### Եղեք պատրաստված

Մեզանից ոմանց համար հանպատրաստից վկայությամբ կիսվելը կարող է վախեցնող թվալ: Կան եղանակներ, որոնցով մենք կարող ենք նախօրոք ծրագրել և «միշտ պատրաստ լինենք պատասխան տալու ամենին, որ [մեր] մեջ եղած հույսի համար պատճառ հարցնե» (Ա Պետրոս 3.15):

Նախ, պատրաստված լինելու համար պետք է վերլուծենք, թե ինչպես ենք մենք ապրում: Արդյո՞ք մեր կյանք ենք հրավիրում Սուրբ Հոգուն և արդյո՞ք մենք ամեն օր ամրապնդում ենք մեր վկայությունները արդար ապրելակերպով: Արդյո՞ք մենք Հոգուն հնարավորություն ենք տալիս խոսել մեզ հետ և աղոթքի ու սուրբ գրությունների ուսումնասիրության շնորհիվ փոխանցում մեզ անհրաժեշտ խոսքերը: Ինչպես Տերը խորհուրդ է տվել Հայրում Սմիթին. «Մի փնտրիր հայտարարել իմ խոսքը, այլ, նախ փնտրիր ձեռք բերել իմ խոսքը, և հետո քո լեզուն պիտի արձակվի» (Վարդապետություն և Ուխտեր 11.21):

Երկրորդ, պատրաստված լինելու համար պետք է առաջ նայել և հաշվի առնել այդ օրվա կամ շաբաթվա ընթացքում սպասվելիք հնարավորությունները ձեր վկայությամբ կիսելու համար: Կարող եք պատրաստվել այդ հնարավորություններին, մտածելով, թե ինչպես կարող են այդ հնարավորություններն օգնել ձեզ կիսվելու ձեր համոզմունքներով:

### Մնացեք կենտրոնացած Փրկիչի և Նրա վարդապետության վրա

Նախագահ Բալլարդն ուսուցանել է. «Թեև, լինելով Եկեղեցու անդամներ, մենք կարող ենք շատ բաների մասին վկայություններ ունենալ, սակայն կան հիմնարար ճշմարտություններ, որոնք մենք պետք է մշտապես սովորեցնենք միմյանց և կիսվենք դրանցով»: Որպես օրինակ, նա թվարկել է. «Աստված մեր Հայրն է, իսկ Հիսուսը Քրիստոսն է: Փրկության ծրագիրը կենտրոնացած է Փրկիչի Քավության վրա: Ջոզեֆ Սմիթը վերականգնել է Հիսուս Քրիստոսի հավիտենական ավետարանի լրիվությունը և Մորմոնի Գիրքն ապացույց է, որ մեր վկայությունը ճշմարիտ է»: Երբ մենք արտահայտենք այդ անկեղծ ճշմարտությունները, մենք կհրավիրենք Հոգուն վկայել, որ այն, ինչ մենք ասել ենք, ճշմարիտ է: Նախագահ Բալլարդն ընդգծել է, որ «Հոգին չի կարող զսպված մնալ, երբ Քրիստոսի մասին մաքուր վկայություն է հնչում»:[2]

### Փրկիչի օրինակը

Սամարիայի ճանապարհից հոգնած, Փրկիչը հանգստանալու համար կանգ առավ մի ջրհորի մոտ և հանդիպեց մի կնոջ: Նա սկսեց խոսել

ջրհորից ջուր հանելու մասին: Օգտվելով այդ առօրյա հանձնարարությունից, որն այդ կինն անում էր, Հիսուսը հնարավորություն ունեցավ վկայելու կենդանի ջրի և հավերժական կյանքի մասին, որը հասանելի է նրանց համար, ովքեր հավատում են Նրան (տես Հովհաննես 4.13–15, 25–26):

**Պարզ վկայությունը կարող է կյանքեր փոխել**

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը պատմել է մի բուժքրոջ մասին, ով այն ժամանակ դեռ Բժիշկ Նելսոնին մի հարց է տվել բարդ վիրահատությունից հետո: «Ինչո՞ւ դուք նման չեք մյուս վիրաբույժներին»: Որոշ վիրաբույժներ, որոնց նա ճանաչում էր, կարող էին դյուրագրգիռ և անվայել լինել, քանի որ նրանք կատարում էին շատ լարված աշխատանք:

Բժիշկ Նելսոնը կարող էր շատ տարբեր պատասխաններ տալ: Բայց նա պարզապես պատասխանեց. «Որովհետև ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է»:

Նրա պատասխանը ստիպեց այդ բուժքրոջն ու նրա ամուսնուն ուսումնասիրել Մորմոնի Գիրքը: Հետագայում Նախագահ Նելսոնը մկրտեց այդ բուժքրոջը: Դրանից տասնամյակներ անց, որպես նոր կարգված Առաքյալ Թեննեսիում (ԱՄՆ) ցցի համաժողովին նախագահելու ժամանակ, Նախագահ Նելսոնը մեծ ուրախությամբ հանդիպեց այդ նույն բուժքրոջը: Նա պատմեց, որ իր դարձը, որն առաջացել էր նրա պարզ վկայությամբ և Մորմոնի Գրքի ազդեցությամբ, օգնել էր դարձի բերել ևս 80 մարդու:[3]

**Գործելու հրավեր**

Մի վախեցեք կիսվել վկայությամբ: Դա կարող է օրհնել նրանց, ում սպասավորում եք: Ինչպե՞ս եք օգտագործելու այս կամ ձեր անձնական գաղափարները այսօր ձեր վկայությամբ կիսվելու համար:

«Սպասավորության սկզբունքները» հոդվածները նախատեսված են օգնել մեզ, որպեսզի հոգ տանենք միմյանց մասին, ոչ թե կիսվենք դրանցով որպես ուղերձ: Երբ մենք ծանոթանանք նրանց հետ, ում ծառայում ենք, Սուրբ Հոգին կհուշի մեզ, որ իմանանք, թե նրանք ինչ ուղերձի կարիք ունեն՝ ի լրումն մեր հոգատարության և կարեկցանքի:

**ԿԻՍՎԵՔ ՁԵՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**

Մեզ ուղարկեք ուրիշներին սպասավորելու կամ նրանց կողմից սպասավորվելու ձեր փորձառությունները: Բացեք liahona.lds.org և սեղմեք «Ներկայացնել հոդված կամ կարծիք»:

**ՀՂՈՒՄՆԵՐ**


1. Մ. Ռասսել Բալլարդ, «Մաքուր վկայություն», *Լիահոնա,* նոյեմբեր 2004, 40:
2. Մ. Ռասսել Բալլարդ, «Մաքուր վկայություն», 41:
3. Jason Swensen, “Be Ready to Explain Your Testimony Using the Book of Mormon, President Nelson Says,” Church News section of LDS.org, Feb. 6, 2018, news.lds.org:


© 2019 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/18:
Թարգմանության հաստատումը. 6/18: *Ministering Principles, March 2019*-ի թարգմանությունը: Armenian. 15764 201